


Կուտակվող ժամկետային ավանդ

Լրացուցիչ տեղեկատվություն

ԱԿԲԱ ԲԱՆԿՈՒՄ ֆիզիկական անձանց բանկային ավանդների հաստուցումը երաշխավորված է «Ավանդների հաստուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից՝ հաստուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝



Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն ՀՀ դրամի և հաստուցված դրամային ավանդի տարբերության չափով

- Հաշվի սպասարկումն (անկախ հաշիվների քանակից և գործարքների իրականացումից) անվճար է:
- Ավանդային պայմանագրի գործողության ավարտից հետո ընթացիկ հաշվի պահպանման սակագները սահմանվում են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից իրականացվող գործառնությունների սակագներին համապատասխան:
- Ավանդային պայմանագրի գործողության ավարտից հետո ընթացիկ հաշվի փակման դեպքում հետագայում ավանդ ներդնելու նպատակով դրա վերաբացումն անվճար է:
- Ավանդային հաշվում ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանց դրամական միջոցները՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով:
- Տոկոսագումարը հաշվարկվում է օրական՝ հաշվին առկա մնացորդի նկատմամբ:
- Բանկն ավանդի գումարի վրա տոկոսագումարները հավելագրում է ավանդը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն հաճախորդին վերադարձնելու կամ ավանդատուի ավանդային հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:
- Արտարժույթով ներդրված ավանդների դիմաց հաշվարկված տոկոսագումարները վճարվում են ՀՀ դրամով՝ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված տվյալ օրվա միջին փոխարժեքով: Հաճախորդի ցանկությանը տոկոսագումարները կարող են վճարվել ավանդի արժույթով:
- *Հաճախորդի հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանա հաճախորդը՝ իր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարումներ կատարելու և սահմանված պարբերականությամբ վաստակած տոկոսագումարները ստանալու արդյունքում:*

- Բանկն իրավունք ունի փոփոխելու բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- Դրամային և/կամ արտարժույթային ավանդը նախատեսված ժամկետից շուտ պահանջելու դեպքում 1 բանկային օրվա ընթացքում ավանդատուին կվճարվի ավանդի գումարը և մինչև ավանդի դադարեցման օրվան նախորդող օրերի համար չվճարված տոկոսագումարները՝ տարեկան 0.1% չափով:
- Ավանդատուի ցանկությամբ ավանդի պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո այն կարող է երկարացվել նույն տևողությամբ և տվյալ տարում գործող տոկոսադրույքով՝ առանց Բանկ այցելելու:
- Եթե կնքվել է առանց երկարաձգման հնարավորության պայմանագիր, դրա ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները երևան գալուց հետո ժամկետային ավանդի գումարը չպահանջելու դեպքում, գումարը փոխանցվում է հաճախորդի ընթացիկ հաշվին և գումարի նկատմամբ սկսում է հաշվեգրվել Բանկի սակագներով ցպահանջ միջոցների համար սահմանված տոկոսադրույքը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
- Ավանդային պայմանագրով որոշված տոկոսագումարների չափը Բանկը չի կարող միակողմանի նվազեցնել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:
- Տվյալ ավանդային հաշվի համար Բանկի կողմից նախատեսված կամ սահմանված չեն տարեկան տոկոսային եկամտաբերությունը նվազեցնող սակագներ կամ այլ պայմաններ:
- Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում ստացված տոկոսագումարները համաձայն ՀՀ գործող օրենսդրության ենթակա են հարկման 10%-ի չափով:
- Հաճախորդին ՀՀ օրենսդրությամբ **պարտադիր տրամադրման ենթակա** հաշվի քաղվածքը տրամադրվում է անվճար:

ՀՀ օրենսդրությամբ **ոչ պարտադիր տրամադրման ենթակա** քաղվածքը, քաղվածքի կրկնօրինակը տրամադրվում է.

- մինչև 6 ամիս (ներառյալ) վաղեմության դեպքում – անվճար,
- 6-ից 12 ամիս(ներառյալ) վաղեմության դեպքում – 2,000 ՀՀ դրամ(ներառյալ ԱԱՀ-ը),
- 1 տարուց ավելի վաղեմության դեպքում – 3,000 ՀՀ դրամ(ներառյալ ԱԱՀ-ը):
- Փաստաթղթերի կրկնօրինակը տրամադրվում է՝
- մինչև 3 ամիս վաղեմության դեպքում՝ 1,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ը),
- 3 -12 ամիս վաղեմության դեպքում՝ 2,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ը),
- 1- 3 տարի վաղեմության դեպքում՝ 5,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ը),
- 3 տարուց ավել վաղեմության դեպքում՝ 10,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ը):
- Տեղեկանքները տրամադրվում են՝
- աուդիտորական հարցման պատասխան՝ 5,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ը),
- այլ տեղեկանքներ՝ 3,000 – 5,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ը):
- Բանկ ներդրված ավանդի վերաբերյալ տեղեկատվությունը բանկային գաղտնիք է, և ԱԿԲԱ ԲԱՆԿԸ երաշխավորում է դրա գաղտնիությունը:
- Ավանդային պայմանագրից ծագած տարաձայնությունները և վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու պարագայում ծագած տարաձայնություններն ու վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: